

609

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐ-ԶՈՒԴԱՅԻ

ՀԱՅՈՑ

ԿՐԹԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.

1908

ՆՈՐ-ԶՈՒԴԱ.-(ՍՊԱՀԱՆ.)

Արտատեսիլ Ս. Ամենափրկիչ վանքի.

8(062)

Կ-93

609

8 (062)

4-93

112 OCT 2009

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

պր

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ

ԿՐԹԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.



Ա.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ.

1. «Նոր-Ջուղայի Հայոց Կրթական-Գրական Ընկերութեան» նպատակն է՝ նպաստել Ջուղայի և Պարսկաստանի հայաբնակ գիւղերի լուսաւորութեան գործին: Ընկերութիւնն իւր նիւթական միջոցների զարգացման համեմատ՝
 - ա.) նպաստում է գլխաւորաբար Ն-Ջուղայում գոյութիւն ունեցող ազգային ուսումնարաններին և այլ բարենպաստակ հաստատութիւններին:
 - բ.) Օժանդակում է եղած գիւղական դպրոցներին և բանում է նորերը:
 - գ.) Բանում է հայաբնակ գաւառների լարմարաւոր ու ապահով կենդրոններում գիւղական զբաղարաններ:

~~17103-58~~

904
45

17103-58



- Գ.) Նպաստում է Ջուզայի թատերական գործին, կազմակերպելով ներկայացումներ:
- Ե.) Հրատարակում է գլխավորաբար ժողովրդական (յատկապէս գիւղական ժողովրդի) և մանկական ընթերցանութեան համար յարմարաւոր գրքեր:
- Զ.) Օգնում է ընդունակ չքաւոր աշակերտներին և աշակերտուհիներին ուսումը շարունակելու:
- Է.) Նպաստում է Ն-Ջուզայի և գիւղերի ազգային դպրոցների չքաւոր ու աղքատ աշակերտներին և աշակերտուհիներին դպրոցական անհրաժեշտ պիտույքներով:
- Ը.) Բանում է կիրակնօրեայ կամ երեկոյեան դասընթացքներ և կազմակերպում է դասախօսութիւններ:

Բ.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՋՄԱԿԵՐՎՈՒԹԻՒՆ

- 2. Ընկերութիւնը բաղկանում է ամեն դասակարգի երկու սեռի անդամներից (18 տարեկանից վեր):
Անդամների թիւը սահմանափակուած չէ:

- 3. Ընկերութեան անդամները լինում են՝
Ա.) Պատուաւոր, Բ.) Մշտական և Գ.) Տարեկան:
Այս կոչումները կրում են երկու սեռի անձինք ևս:
- 4. Ընկերութեան պատուաւոր անդամ լինելու կոչում են ստանում այնպիսի անձինք, որոնք յօգուտ Ընկերութեան նշանաւոր ծառայութիւն են արել: Պատուաւոր անդամի ընտրութիւնը կատարոււմ է ընդհանուր ժողովում, Վարչութեան առաջարկութեամբ: Ծանօթ. Պատուաւոր անդամներին Ընկերութիւնից արւում է վկայաթուղթ:
- 5. Ընկերութեան մշտական անդամներ համարոււմ են այն անձինք, որոնք նուիրել են միանուազ ո՛չ սրակաս քան յիսուն թուման:
- 6. Ընկերութեան տարեկան անդամներ են համարոււմ նրանք, որոնք տարեկան երկու քուման են վճարում Ն-Ջուզայում և Պարսկաստանի այլ քաղաքներում, Հնդկաստանում՝ ուրք ուուիի, իսկ գիւղերում՝ մէկ քուման:
- 7. Բոլոր անդամները ձայնի իրաւունք ունեն ընդհանուր ժողովում, եթէ միայն անձամբ

ներկայ են և հատուցել են տարեկան վճարը:

- 8. Ընկերութեան այն անդամը, որի գործողութիւնը խախտում է Ընկերութեան շահերը, ընդհանուր ժողովի վճռով կ'արձակուի Ընկերութիւնից:

Գ.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑԻՆԵՐԸ.

- 9. Ընկերութեան միջոցներն են՝

- ա.) Անդամների տարեկան և միանուագ վճարները:

- բ.) Անդամների և կողմնակի անձանց, նոյնպէս և զանազան հիմնարկութիւնների նուիրատուութիւնները՝ փողով, իրեղէններով, այլ և կտակներով աւանդուածները:

- գ.) Եկամուտներ, որոնք գոյանում են Ընկերութեան կազմած թատերական ներկայացումներից, գրական-երաժշտական հանդէսներից, վիճակախաղերից, դասախօսութիւններից, գրքերի վաճառումից և այլն:

Դ.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐԻ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ.

- 10. Ընկերութեան գործերը վարում են՝
 - Ա.) Ընկերութեան Կենդրոնական Վարչութիւնը,
 - Բ.) Տեղական Վարչութիւններն ու մասնախմբերը, և
 - Գ.) Անդամների ընդհանուր ժողովը:

Ա.) ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ.

- 11. Կենդրոնական Վարչութիւնը բաղկանում է ինն անդամներից և վեց փոխ-անդամներից: Անդամներից վեցն ընտրւում են գաղտնի քուէարկութեամբ Ընկերութեան ընդհանուր ժողովում, ինչպէս և բոլոր փոխ-անդամները, իսկ մնացեալ երեք անդամներից մէկին՝ Ն-Ջուզալի ազգային երկսեռ դպրոցաց Հոգաբարձական ժողովն է ընտրւում իր միջից, երկրորդին՝ նոյն երկսեռ դպրոցաց Ուսուցչական կազմն է ընտրւում իր միջից, իսկ երրորդին՝ Ն-Ջուզալ-

յի Հայուհեաց Բարեգործական Անկերութեան Վարչութիւնն է ընտրուած իր միջից, գաղտնի քուէարկութեամբ:

Ծանօթ. Ի նկատի ունենալով, որ այս յօդուածի մէջ յիշուած բոլոր հաստատութիւնների նպատակն ընդհանուր է, այն է՝ նպաստել, զարկ տալ Ն-Ջուղայի և գիւղերի հայ բնակչութեան լուսաւորութեան գործին, ուստի աշխատանքի կանոնաւորութեան և արդիւնաւորութեան տեսակէտից, անհրաժեշտ է զօրեղ կապ հաստատել բոլորի միջև՝ փոխադարձ մատուր և բարոյական օժանդակութեամբ:

12. Անդրոնական Վարչութեան վեց անդամները ընտրուած են երեք տարով: Անդամների միաժամանակ դուրս գալու առաջն առնելու համար, ամեն տարուայ վերջին Վարչութեան անդամների երրորդ մասը թողնուած է իր պաշտօնը, Անկերութիւնը կազմելուց յետոյ առաջին երկու տարին վիճակով, իսկ այնուհետև ընտրութեան աւագութեան կարգով: Գուրս զնացող անդամները կարող են վերընտրուել: Երկսեռ Գլխացի Հոգաբարձութեան, Ուսուցչական կազմի և Հայուհեաց Բարեգործական Անկերութեան ներկայացուցիչ—անդամների ընտրութիւնը իւրաքան-

չիւր տարուայ վերջին է լինելու, (երբ որ Վարչութեան անդամների երրորդ մասի ընտրութիւնն է կատարուելու):

13. Վարչութեան ինն անդամները ընտրուած են իրենց միջից նախագահ և փոխ—նախագահ, գանձապահ և քարտուղար:

Ծանօթ. Գարտուղար կարող են ընտրել փոխ—անդամներից ևս:

14. Վարչութիւնը ժողովներ է ունենում ըստ կարելույն յաճախ (առ նուագն 15 օրը մի անգամ) նախագահի հրաւերով, կամ Վարչութեան անդամների ս'չ պակաս քան $\frac{2}{3}$ մասի պահանջմամբ:

15. Վարչութեան նիստերն օրինական են, երբ անդամների կէս մասից աւել ներկայ են: Վճիռները կայանում են ձայների առաւելութեամբ, որոնց հաւասարութեան դէպքում, նախագահողի ձայնը տալիս է առաւելութիւն:

16. Վ. Վարչութեան պարտաւորութիւններն են՝

Ա.) Բաժանել Վարչութեան պարապմունքներն անդամների մէջ փոխադարձ համաձայնութեամբ կամ գաղտնի քուէարկութեամբ:

Բ.) Աշխատել գանազան տեղեր ճիւղեր հիմ-

նել (Վարչութիւններ կամ Մասնախմբեր), յատկապէս գիւղերում, որպէս զի գիւղական ժողովուրդն ևս հետզհետէ վարժուի գիտակցական ինքնօգնութեան և գործունէութեան:

Գ.) Հոգալ Ընկերութեան նիւթական միջոցների աւելացման և գործունէութեան բնդարձակման մասին:

Դ.) Հսկել անդամակցական վճարներն իր փամանակին գանձելու վրայ:

Ե.) Սահմանել Վարչութեան գործադարութեան և հաշուապահութեան համար կարգ:

Զ.) Հսկել կանոնադրութեան կատարման վրայ:

Է.) Հրաւիրել անհրաժեշտ դէպքերում ընդհանուր ժողովներ:

Ը.) Կազմել և առաջարկել ընդհանուր ժողովին Ընկերութեան զուժարների հաշիւը, գործունէութեան տեղեկագիրը և յաջորդ տարուայ նախահաշիւը:

Թ.) Քննել Ընկերութեան անդամների յատարարութիւններն և այլ զիմումները:

Ճ.) Առաջարկել ընդհանուր ժողովի քննութեանն այն հարցերը, որոնք չեն

վճռուել Վարչութեան կողմից:

ՃԱ.) Նախապէս մշակել առհասարակ այն բոլոր հարցերն ու գործերը, որոնք պէտք է ընդհանուր ժողովի քննութեան առարկայ լինեն:

ՃԲ.) Կատարել ընդհանուր ժողովի որոշումները:

ՃԳ.) Տեղական Վարչութեանց և Մասնախմբերի համար մշակել կանոնադրութիւն, որը պիտի վաւերացնի ընդհանուր ժողովը:

ՃԴ.) Կեդրոնացնել իր մէջ բոլոր տեղական Վարչութիւնների և Մասնախմբերի կայքի, զուժարների և գործունէութեան տեղեկութիւնները, տալով նրանց որոշ հրահանգներ կարևոր դէպքերում:

17. Կ. Վարչութիւնը կարող է իր նիստերին հրաւիրել՝

Ա.) Փոխ-անդամներին ձայնի իրաւունքով և

Բ.) Ընկերութեան այլ անդամներին, կամ այնպիսիներին, որոնք անդամներ չեն, բայց որոնց մասնակցութիւնը կարող է նպաստել Ընկերութեան ձեռնարկութիւններին ու գործերին. սրանք մասնակցում են խորհրդակցական ձայնով:

18. Վարչութիւնն ընդունում է անդամակցական վճարներ և դրամական նուէրներ, մուծանելով առանձին ժապաւինեալ տուամբների մէջ և տալով անդորրագրեր՝ նախագահի, գանձապահի և քարտուղարի ստորագրութեամբ:

Բ.) ՏԵՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ՄԱՍՆԱԽՄԲԵՐ.

19. Տեղական Վարչութիւններ են կազմուում 3—5 անդամներից, երբ երկու սեռի անդամների թիւը 15-ի է հասնում, իսկ մասնախմբեր բացւում են սակաւաբնակ տեղերում, որչափ անդամ էլ ունենան:

20. Բացի Պարսկաստանի քաղաքներից, առանձնապէս պիտի աշխատել ճիւղեր հիմնել (վարչութիւններ կամ մասնախմբեր) գիւղերում, նոյնպէս և Կալիթա, Գաքա, Ռանգուն, Բոմբէյ, Սինկափուռ, Բաթաւիա և Սուրբայետ քաղաքներում և որտեղ կան փոքրիկ գաղութներ Ջսւղայից, որոնց նիւթական և բարոյական աջակցութիւնը միջոց կ'տայ Կենդրոնական Վարչութեանն աւելի ընդարձակելու իր գործունէու-

թիւնը՝ յատկապէս մեր գիւղական ժողովրդի ազգային լուսաւորութեան ու կրթութեան օգտին:

Գ.) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ.

21. Ընդհանուր ժողովներում նախագահում է Պարսկ—Հնդկաստանի թեմի Առաջնորդը կամ Առաջնորդական Փոխանորդը: Սրանց բացակայութեան դէպքում ընդհանուր ժողովն է ընտրում իր միջից նախագահ:

22. Ընդհանուր ժողովներ լինում են սովորական և արտակարգ.

Ա.) Սովորական ժողովները լինում են տարեկան երկու անգամ, հոկտեմբերին՝ նախահաշուի, և մարտին՝ կենդրոնի և ճիւղերի հաշիւների քննութեան համար:

Բ.) Արտակարգ ժողովներ են լինում, երբ Վարչութիւնն անհրաժեշտ է համարում հրաւիրել, կամ երբ Ջուղայում եղած անդամների թուի մի երեսդրականից ստորագրուած՝ յայտարարութիւն է ստացւում Վարչութեան անունով, որը շուտով պիտի հրաւիրի ընդհանուր ժողով:

23. Կանխապէս պիտի ծանուցուեն բոլոր անգամներին՝ ընդհանուր ժողովի պարապմունքի նիւթերը:

24. Ընդհանուր ժողովը կալացած է համարւում, երբ անդամների թուի $\frac{1}{3}$ մասը ներկայ լինի, հակառակ դէպքում՝ 7 օրից յետոյ հրաւիրւում է երկրորդ ժողով, որի համար այլ ևս չի պահանջւում անդամների որևէ սահմանեալ թիւ: Վերջին ժողովի քննութեանն ենթարկւում են միմիայն այն գործերն ու հարցերը, որոնք մտած էին առաջին անգամ չ'կալացած ժողովի պարապմունքների ծրագրի մէջ:

25. Ընդհանուր ժողովի զբաղմունքի առարկաներն են.

ա.) Քննել Ընկերութեան Կերպրոնական Վարչութեան և ճիւղերի գումարների և գործունէութեան տարեկան հաշուետուութիւնը:

Վարչութեան մտից և ելից հաշուի և առ հասարակ դրամների ստուգութեան համար, ընտրւում է ժողովի միջից Վերաստուգող Յանձնաժողով, բաղկացած ո՛չ պակաս քան երեք անդամներից, որոնք Վարչութեան անդամ չ'պէտք է լինեն:

բ.) Քննել յաջորդ տարուայ նախահաշիւը:

գ.) Որոշել ծախուց գումարներ, որոնք Ընկերութեան ընթացիկ ծախքերի համար են, անձեռնմխելի գումար, որը կազմելու համար ամենայն տարի պահւում է Ընկերութեան եկամուտներից առ առաւելն 5% և յաւուկ գումարներ, որոնք նուիրողների կողմից որոշ նպատակների են յատկացրուած:

դ.) Լուծում տալ զանազան հարցերին, որոնք առաջարկւում են Կենդրոնական Վարչութեանը՝ տեղական Վարչութիւնների ու Մասնախմբերի և կամ Ընկերութեան անդամների կողմից:

ե.) Ընտրել Կենդրոնական Վարչութեան անդամներ և Ընկերութեան պատուաւոր անդամներ:

զ.) Օժանդակել միանուագ կամ պարբերաբար զանազան կրթական հաստատութիւններին և ազգօգուտ ձեռնարկութիւններին:

26. Ընդհանուր ժողովներում բոլոր գործերը վճռւում են ձայների առաւելութեամբ, իսկ երբ ձայները հաւասար են, նախագա-

հի ձայնը սուսակցութիւն է տալիս, բացառութեամբ Վարչութեան անդամների ընտրութեան, որ լինում է ժողովում ներկայ եղող անդամների $\frac{2}{3}$ մասի համաձայնութեամբ:

27. Բոլոր անդամներն անխտիր պարտական են աշխատելու Ընկերութեան գործունէութեան ընդարձակման համար և ամենայն կերպ աջակցելու, որ Կենդրոնական Վարչութիւնը սկսի յաջողութեամբ և յառաջ տանի ժողովրդի լուսաւորութեան վերաբերեալ ձեռնարկութիւններն ու գործերը:

28. Ընկերութիւնն իր Վարչութիւնների և Մասնախմբերի միջոցով պիտի աշխատի յարաբերութեան մէջ մտնել և կապ հաստատել Պարսկահայոց բարենպատակ և կրթական այլ Ընկերութիւնների հետ, նույնպէս և Պարսից համանման նպատակներով կազմակերպութեանց հետ: Ըստ կարելւոյն աշխատել նպաստել մերձեցմանը՝ փոխադարձաբար խորհրդակցելով և միմեանց օժանդակելով: Այս կարևոր հարցի յաջողութեան համար ևս պէտք է խորհրդակցել ընդհանուր ժողովում:

29. Ընդհանուր ժողովներում բոլոր ընտրութիւնները կատարւում են գաղտնի բուկետարկութեամբ:

Ե.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ.

30. Ընկերութիւնը գտնւում է Պարսկ-Հնդկաստանի Թեմի Առաջնորդի հովանաւորութեան ներքոյ:

31. Ընկերութիւնն ունի կնիք՝ «Նոր-Ջուղայի Հայոց Կրթական-Գրական Ընկերութիւն». կնիքը գտնւում է Վարչութեան նախագահի մօտ:

32. Եթէ որեւէ պատճառով Ընկերութիւնը ստիպուած կ'լինի դադարեցնել իր գործունէութիւնը, որի համար անհրաժեշտ է բոլոր անդամների երկու երրորդականի վճիռը, այն դէպքում բոլոր գումարներն ու ստացուածքը կ'յատկացուեն Ջուղայի և գիւղական ազգային դպրոցներին, Պարսկ-Հնդկաստանի Առաջնորդի և Ջուղայի Ազգային Երկսեռ Դպրոցաց Հոգաբարձութեան հսկողութեան ներքոյ:

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

<< Ազգային գրադարան



NL0166331

ՀԵԿԵՐՄՔԻԱՆ ԿԱՍՏԷՆԻ

THE EDUCATIONAL-LITERARY
SOCIETY
OF THE ARMENIANS OF JULFA
ISPAHAN, PERSIA